ԳՈՀԱՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍՅՈՒՆՅԱՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ

Եկեղեցի և դպրոց անբաժան հաստատություններ
են և միշտ փարած իրարու:
Վահե Հայկ

Հայոց դպրության ամենահին ու կարևոր միջավայրն է եղել Սյունիքը, որտեղ դեռ 5-րդ դարի սկզբին Մեսրոպ Մաշտոցի նախաձեռնությամբ տեղի իշխաններ Վասակի և Վաղարշակի հովանավորությամբ հիմնադրվեցին առաջին հայագիր դպրոցները: Սույն հոդվածում համառոտ կերպով ներկայացված է Սյունյաց միջնադարյան դպրոցների պատմությունը, ժամանակահատված, երբ հայ դպրոց հասկացությունը գրեթե ամբողջությամբ համատեղվում է հայ եկեղեցի հասկացության հետ, երբ աշխարհիկ իշխանների և հոգևորական բարձրաստիճան պաշտոնյաների սերտ համագործակցության արդյունքում հիմնվեցին բազմաթիվ դպրոցներ, որոնց շրջանավարտները հոգևոր բարձր կոչումների արժանանալուց զատ թողեցին գիտական ուսումնասիրությունների ու մատյանների անգնահատելի նմուշներ:

Բանալի բառեր: *Սյունյաց դպրոցներ, Հայ Առաքելական Եկեղեցի, կրթություն, գիտություն*

Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին աշխարհի հնագույն եկեղեցիներից է: Դժվար է պատկերացնել մեր պատմության որևէ հատված առանց Հայ Առաքելական Եկեղեցու և նրա կարևոր դերակատարման: Քրիստոնեության ուսմունքը քարոզելուց, տարածելուց ու պահպանելուց զատ այն իր վրա է վերցրել նաև ազգային տարաբնույթ հարցերի ու խնդիրների լուծման, նաև ազգապահպանման նվիրական գործը:

Հայոց Եկեղեցու դերը հայ ժողովրդի ազգային ինքնության և պահպանության գործում լավագույնս երևում է հայ ժողովրդի կողմից Հայոց Եկեղեցուն տրված ազգային եկեղեցի բնորոշման մեջ: Միայն ազգային եկեղեցին է, որ կարող է պահպանել ազգային ինքնությունը, հոգևոր դրոշմ դնել և մի նոր փայլ հաղորդել ազգային արժեքներին: Այս իրողությունը նկատի ունենալով է, որ Նիկոլ Աղբալյանը գրում է, թե չորրորդ դարում Հայաստանը քրիստոնեացավ, իսկ հինգերորդ դարում քրիստոնեությունը հայացավ:

4-5-րդ դարերում հայ կյանքի լուսավորության ընթացքի ջահակիրները եղան Ս. Գրիգորը՝ որպես հոգիների լուսավորիչ, ով քրիստոնեության լույսը տարածեց հայ կյանքից ներս, Ս. Ներսեսը՝ սրտերի լուսավորիչ, ով հայ կյանքից ներս տարածեց քրիստոնեական բարոյականությունը, գթասրտությունը և ընդհանրապես կենցաղավարությունը, և, վերջապես, Ս. Մեսրոպն ու Ս. Սահակը, որպես մտքերի լուսավորիչ, հայոց գրերով վառեցին հայ մշակույթի նախորդ դարերից եկող կերոնի լույսը:

Հենց այս ժամանակ էլ բացվեցին առաջին հայ դպրոցները, հայերեն թարգմանվեց Սուրբ Գիրքը, գրվեցին բազում գրական, աստվածաբանական եւ փիլիսոփայական գործեր, որոնց հեղինակները անմահացան ոչ միայն հայ ժողովրդի, այլ նաև համաշխարհային գրականության և արվեստի մեջ:

Մեր հայրերը հասկացան, որ հայ մնալու առաջին և գլխավոր նախապայմանը գիր և գրականություն ունենալն է, իսկ հայ դպրոցը՝ հային հայ պահելու դարբնոցը: Հայ ժողովուրդն իր վաղվա օրը միշտ կապել է դպրոցի հետ և այդ մտածողությունը փոխանցել սերնդե սերունդ:

Հայ ժողովրդի դպրոցն ու կրթությունը դարերի պատմություն ունեն՝ հարուստ բազմաթիվ կրթական օջախների առկայությամբ և իմաստասեր մանկավարժների և հոգևորականների գործունեությամբ: Հայ դպրոցի պատմության մեջ իրենց ուրույն լույսով փայլում են Սյունյաց աշխարհի կրթական օջախները, որոնք մեծապես նպաստեցին կրթական գործի զարգացմանը Հայաստանում և Հայաստանի սահմաններից դուրս: Հատկանշական է, որ Սյունիքում հիմադրված համալսարանները, վարդապետարանները, բարձր կարգի եկեղեցական դպրոցները, այլ եկեղեցական դպրոցները իրենց յուրահատուկ և կարևոր տեղն են զբաղեցնում հայ ժողովրդի պատմության, հայոց եկեղեցու պատմության մեջ:

Համառոտ անդրադարձ կատարելով այդ կրթօջախների պատմությանը՝ կփորձենք մեկ անգամ ևս կարևորել այն փաստը, որ մեր պատմության ամենափառավոր էջերը գրվել են հայոց աշխարհիկ իշխանների և հոգևոր բարձրաստիճան պաշտոնյաների համատեղ գործակցությամբ, և անհնար է տարանջատել ու ասել, թե այդ էջերից որն է հայոց պատմությանը պատկանում և որը՝ հայոց եկեղեցու պատմությանը:

Հայոց դպրության ամենահին ու կարևոր միջավայրն է եղել Սյունիքը, որտեղ դեռ 5-րդ դարի սկզբին Մեսրոպ Մաշտոցի նախաձեռնությամբ տեղի իշխաններ Վասակի և Վաղարշակի հովանավորությամբ հիմնադրվում են առաջին հայագիր դպրոցները: Հիմնադրվեցին, որպեսզի նրանիցից մի քանիսը դասվեն Հայոց մտավոր ու հոգևոր դաստիարակության ամենախոշոր կենտրոնների շարքը: Սյունյաց եպիսկոպոսությունը, որը կոչվում էր մետրոպոլություն, դեռ 4-րդ դարից մեծ իրավունքների տեր էր: Նա ուրիշ տասներկու եպիսկոպոսությունների ղեկավարն էր և իրավունք ուներ եպիսկոպոսներ ձեռնադրել: Իսկ դպրոցները հարուստ էին ոչ միայն գիտուն վարդապետներով, այլև ապահովված էին նյութապես, որովհետև մշտապես գտնվում էին Սյունյաց իշխանների հոգածության ներքո: Հարկ է նշել, որ Շաղատը ժամանակին Սյունյաց իշխանների ոստանն էր և եպիսկոպոսական նստավայրը, այն գտնվում էր Որոտանի վերին հոսանքի աջ ափին՝ Անգեղակոթի դիմաց: Սյունիքի կրթական օջախներից է եղել նաև Շաղատի վանքի վարդապետարանը: Վարդապետարանը հիմնել են Պետրոս Քերթողը, ուսուցչապետ Մաթուսաղա Սյունեցին, Ստեփանոս Սյունեցին: Այն գործել է 5-9-րդ դարերում:

9-րդ դարում, երբ Սյունյաց իշխանները կառուցում են Սյունիքի մետրոպոլիտության նոր կենտրոնը՝ Տաթևի վանքը, վարդապետարանը տեղափոխվում է այնտեղ: Սյունյաց վարդապետարանում սովորել են Թեոդորոս Քռթենավորը և Ստեփանոս Սյունեցին: Դասավանդել են անվանի քերթողներ Պետրոս Սյունեցին, Մաթոս աղան, Մովսեսը և ուրիշներ:

Սյունյաց Վարդապետարանը համարվել է «Գլուխն ամենայն գիտնոց Հայոց և պայծառացեալ դպրոցին»: Դեռ հնագույն ժամանակներից սովորություն կար, որ Սյունյաց վանքերի ու դպրոցների վարդապետները, ուսուցիչները ու նրանց սաները «Ի քաղաքս և գեաւղս շրջէին ի մեջ գաւառաց և ի տուն իշխանաց» և ուսուցանեին նրանց: Սյունյաց դպրավանքերի բոլոր ուսանողները ընդհանուր, պարտադիր առարկաներից մասնագիտական կրթություն ստանալուց հետո, ամեն մեկը շարունակում էր ուսումն իր նախասիրության և բնական ձիրքին համապատասխան ու դառնում էին «անհաղթ փիլիսոփաներ», «աննման երաժիշտներ», «բանիբուն վարդապետներ», «ճարտար հռետորներ», «իմաստուն դպրապետեր», ...: Սյունյաց վարդապետարանի վրա դրված է եղել թարգմանության ու մեկնության պարտականություն:

XIV-XV դարերում Հայաստանը, ենթարկվելով օտար նվաճողների արշավանքներին և հանդիսանալով ավերիչ պատերազմների թատերաբեմ, սուր ճգնաժամ էր ապրում: Հետամնաց ցեղերի տիրապետությունը, քմահաճ ու դաժան հարկահանությունը, բռնության և թալանի օրինականացումը պատճառ դարձան տնտեսության և մշակույթի հետընթացին և անկմանը:

Հայաստանի միայն մի փոքր մասը՝ պատմական Սյունիքը, մնաց համեմատաբար բարվոք վիճակում, այն էլ տվյալ ժամանակահատվածի ոչ ամբողջ ընթացքում: Այստեղ ստեղծված քիչ թե շատ բարենպաստ քաղաքական և տնտեսական դրության շնորհիվ հաջողվեց ժամանակավորապես կանխել բազմադարյան մշակույթի անկումը, իսկ դրա որոշ ճյուղեր զարգացնել ու բարձրացնել նոր աստիճանի: Այս հայրենանվեր գործի դրոշակակիրը դարձավ Վայոց ձորում գործող Գլաձորի համալսարանը:

Սյունյաց աշխարհի նշանավոր կրթօջախներից Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի հոգևոր, գիտական և հասարակական քաղաքական կյանքի զարգացման գործում իր ուրույն տեղն է զբաղեցնում: Գլաձորի համալսարանը հայ ժողովրդի համար այդ անագորույն ժամանակաշրջանում ոչ միայն կարողացավ իր գոյությունը գրանցել Հայոց դպրության կաճառում, ոչ միայն ոչնչացումից կարողացավ փրկել անցյալից ժառանգված մեծ արժեքները, այլև ստեղծել նորը, որի գնահատականը մի քանի տողով ներկայացնելը անհնար է:

Համալսարանի հիմնադիրներն են Ներսես Մշեցին, Եսայի Նչեցին, Տիրատուր Վարդապետը և Կյուրեղ րաբունապետը: Գլաձորի համալսարանը հովանավորել են Օրբելյան և Պռոշյան իշխանական տները, ինչպես նաև Սյունիքի եկեղեցական իշխանությունը: Օրբելյանների գերագահությամբ հիմնադրված այս ուսումնական հաստատությունը փարոսի նման իրեն էր ձգելու ոչ միայն բուն Հայաստանի, այլև հեռավոր հայ գաղթօջախների՝ Կիլիկիայի, Ղրիմի, Վրաստանի և այլ վայրերի ուսումնատենչ պատանիներին: Հիսունհինգ տարի շարունակ Եսայ Նչեցին հոգ տարավ կրթելու և հայրաբար խնամելու նրանց, ովքեր գալիս էին Գլաձոր՝ առնելու Ոգեղենի իրենց բաժինը:

Եվ պատահական չէ, որ Գլաձորի համալսարանի սան Հակոբ Թագորեցին պատկառանքով գրում է. «Համարձակեմ սա կոչել երկրորդ Աթենք և բոլոր իմաստնությունների մայրաքաղաք», իսկ Մխիթար Երզնկացին Գլաձորի համալսարանը բնութագրում է իբրև «մայր իմաստնության» և «իմաստնության

տուն»: Գլաձորի համալսարանը նաև հոգևոր կենտրոն էր և դիմագրավում էր կաթոլիկ և քաղկեդոնական դավանանքների հարձակումներին: Գլաձորի համալսարանի սաներն իրենց ուսուցիչների հետ գնում էին ժողովրդի մեջ և «խրատիչ» ու «համոզիչ» զրույցներով դարձի էին բերում մոլորվածներին:

Գլաձորի համալսարանը մոնղոլների արշավանքների ժամանակ ենթարկվեց ահավոր ավերածության: Նոր թշնամին եկել էր և կործանել Հայոց քաղաքների պարիսպները, բայց չկարողացավ կործանել Հայոց Դպրության Ոգեղեն Ամրոցը: Այդ անառիկ ամրոցի պաշտպանությունը դարեր շարունակ հայ մտավորական գործիչների և հոգևորականների ձեռքին է եղել՝ ապահով և հուսալի:

Գլաձորի մայրամուտից հետո Եսայի Նչեցու աշակերտ Հովնան Որոտնեցին փոխադրվեց Տաթևի վանք և այնտեղ համալսարանական կարգ ու կանոն ստեղծեց: Այն որպես համալսարան հիշատակվում է 1390 թվականից և գործել է մինչև 1435 թ.: Տաթևի համալսարանը նույնպես հովանավորել են Օրբելյան իշխանական տունը և Սյունյաց մետրոպոլիտությունը: Տաթևի Բարձրագույն Դպրոցի հռչակը ևս, ինչպես Սյունյաց Վարդապետարանի հռչակը, արագ տարածվում է Հայոց մեջ, ուր նույնիսկ ամենահեռավոր գավառներից այստեղ են գալիս կատարյալ ուսում և հոգևոր աստիճաններ ստանալու համար: Տաթևը դառնում է Սյունիքի հոգևոր ամենախոշոր կենտրոնը, որտեղ կազմակերպվել էր ամենատիպական ու դասական Հայոց կատարյալ կրթության գործը: Տաթևին վիճակված էր մինչև մեր օրերը հասցնել Հայոց հնագույն դպրության և հոգևոր կյանքի մասին տեղեկություններ:

Հովհան Որոտնեցին մահից առաջ իրեն փոխարինող և հայոց ռաբունապետ է կարգել իր աշակերտ Գրիգոր Տաթևացուն: Հ. Որոտնեցու և Գր. Տաթևացու ժամանակակիցներից քչերն էին գիտակցում, որ ազգային մշակույթի պահպանումն ու զարգացումը հոշոտված Հայաստանի համար գրեթե միակ միջոցն էր ահեղ, բայց տգետ ու բիրտ զավթիչներին ընդդիմանալու համար:

Գրիգոր Տաթևացու ռաբունապետության շրջանում Տաթևի համալսարանը դարձավ Հայ եկեղեցու ուղղափառ դավանության և ավանդության պաշտպանության ամրոց:

Տաթևի համալսարանի գիտնական վարդապետները Գրիգոր Տաթևացու գլխավորությամբ անհաշտ պայքար են մղել Հայաստան ներթափանցած կաթոլիկ քարոզիչների՝ միարարների դեմ: Տաթևացին կատարելագործել է համալսարանի ծրագիրը. կազմել է դասագրքեր, որոնք եղել են նրա քարոզության արվեստի, աստվածաբանության և Հայ եկեղեցու դավանության լավագույն ձեռնարկները: Իր մահից հետո համալսարանն այլևս իր նախկին հռչակը չուներ, իսկ 1435 թ. Շահռուխի արշավանքի ընթացքում Տաթևի վանքն ավերվեց, իսկ միաբաններն ապաստանեցին Գուգարքում:

Տաթևի համալսարանն իր գլխավորած դպրոցների հետ միասին մոտ 8 տասնամյակ կենդանի պահեց անցյալի մշակութային ավանդույթները և զգալի ավանդ մուծեց միջնադարյան հայ մշակույթի գանձարան:

Եսալի Նչեցու մյուս աշակերտներից Տիրատուրը, ով դեռևս Նչեցու կենդանության օրոք մեծ հեղինակություն էր վայելում Գլաձորի համալսարանում և համարվում ռաբունապետ, տեղափոխվեց Հերմոնի վանք, որտեղ և հիմնեց Հերմոնի նշանավոր դպրոցը:

Որպես մշակութային և գրչության օջախ Հերմոնի վանական դպրոցը

բուռն ծաղկում է ապրել XIV—XV դարերում: Առանձնապես մեծ համբավ և հեղինակություն այս դպրոցը ձեռք բերեց իր հիմնադրի Տիրատուր վարդապետի ղեկավարության տարիներին: Տիրատուրը եկել էր Կիլիկիայից, ուսանել Եսայի Նչեցու մոտ՝ կարճ ժամանակում հասնելով մեծ փառքի և ճանաչման: Հերմոնի միաբանները Հովհաննես Կոլոտիկ առաջնորդի գլխավորությամբ որոշակի դեր խաղացին Հայոց հայրապետական աթոռը Կիլիկիայի Սիս քաղաքից Էջմիածին տեղափոխելու գործում: Նա իր աշակերտ Ստեփանոսի և մյուսների հետ մասնակցեց Էջմիածնի 1441 թ. եկեղեցական ժողովին և պատգամավորներին կոչ արեց Լուսավորչի աջը և կաթողիկոսական գահն անհապաղ տեղափոխել Արևելյան Հայաստան:

Այս ուսումնական հաստատությունը եղել է Օրբելյանների ֆեոդալական տիրույթի սահմաններում և նյութապես ապահովվել է նրանց միջոցներով: XIV դարի առաջին տասնամյակներին Հերմոնի վարդապետներին ու սաներին աջակցում էր անձամբ Բուրթել Մեծը:

Սյունյաց աշխարհի մեկ այլ կարևորագույն կրթական օջախներից է Հարանց անապատի դպրոցը: Դպրոցը հիմնադրվել է Մովսես Գ Տաթևացու կողմից՝ 1614թ: Մովսես Տաթևացին, մինչև Հարանց անապատի հիմնումը, Երուսաղեմ էր գնացել ուխտի եւ երկրպագության (Քրիստոսի մարդեղության վայրերով), գնացել էր Եգիպտոսի երկիրը եւ շրջել ղպտիների վանքերն ու անապատները՝ նրանց մեջ շրջելով, հարցնելով ու տեսնելով, ամեն ինչին տեղեկանալով: Եվ երբ վերադարձավ Երուսաղեմ ու եղավ Սուրբ Հարություն տաճարի լուսարար, հանդիպեց պարոն Սարգսին եւ Տեր Կիրակոսին, ովքեր տեղ էին որոնում անապատի համար: Մովսեսն ասաց. «Այդպիսի տեղ, որ որոնում եք, հայոց արեւելյան երկրում շատերը կան, մանավանդ Սյունյաց աշխարհում, որոնց ես իսկն ականատես եմ. այն աշխարհում շատ ավելի պատշաճ է անապատ շինել, որովհետեւ բուն Հայաստանն է....»: Արդ՝ այդպիսի հորդոր խոսքով նրանց ուղարկեց Սյունիք՝ հանձն առնելով, որ երբ նրանք ժամանեն եւ որեւէ տեղ անդորրանալով՝ զետեղվեն, ինքը կժամանի եւ նրանց հետ կբնակվի իբրեւ միաբան: Այդպես էլ եղավ....: Հարանց անապատի դպրոցը կրթել է ընթերցասեր կրոնական գործիչներ, որոնք հետագայում հիմնել են իրենց միաբանությունները: Հարանց անապատի դպրոցը նաև գրչության կենտրոն էր: Այնտեղ ընդօրինակել են ոչ միայն ձեռագրեր, այլև կազմվել դասագրքեր, ժողովածուներ: 17-րդ դարասկզբի անբարենպաստ պայմաններում ծնունդ առած Սյունյաց մեծ անապատով (Հարանց անապատը) սկիզբ դրվեց Արևելյան Հայաստանի գիտամշակութային առաջընթացին: Կազմակերպական իր սկզբունքներով, դասավանդվող առարկաներով ուսումնական այդ կենտրոնը խոր հետք թողեց հայ դպրոցական կյանքի եւ մշակույթի պատմության մեջ: Սյունյաց աշխարհի տարբեր կողմերից պատանիներ գալիս և սովորում էին նաև Վահանավանքի դպոցում: Վահանավանքի կառուցման մասին հիմնական տեղեկությունները հաղորդում է XIII դ. պատմիչ Ստեփանոս Օրբելյանը: Նրա վկայությամբ Սյունյաց Բաղք գավառի Ձագիկ գահակալ իշխանի կրտսեր որդին՝ Վահանը, Բաղաբերդ ամրոցի մոտակայքում, ընտրելով հարթ ու հարմարավետ մի վայր, գահաժառանգ եղբոր՝ Ջևանշերի աջակցությամբ սկսել է Սբ Գրիգոր Լուսավորիչ գմբեթավոր եկեղեցու կառուցումը, որն ավարտել է 911

թ.: Ապա հիմնել է հոգևոր դպրոց, ուր կրթություն ստացան բազմաթիվ պատանիներ: Որոշ տարիներ վանքի միաբանությունը ղեկավարելուց հետո Վահանը հրավիրվում է Սյունյաց եպիսկոպոսության պաշտոնին, իսկ այնտեղից էլ՝ հայոց կաթողիկոսության:

Բավականին երկար կարելի է խոսել Հայոց աշխարհի այս գողտրիկ անկյունում ծվարած կրթական օջախների, աշխատասեր ու նվիրյալ հիմնադիրների, այնտեղ կրթված սաների մասին: Սյունիքի նահանգի կրթական օջախների գոյությունը ինքնին հերոսություն էր, հայ եկեղեցու և մշակույթի գործիչների՝ հայրենիքի և ժողովրդի հանդեպ ունեցած անսահման սիրո նվիրվածության արտահայտություն: Հպանցիկ տեղեկությունների այս չափը Սյունյաց դպրոցների ու վարդապետարանների, ուսուցիչների և ուսուցչապետների մասին, որոնք իրենց մտքի փայլատակումներով ապահովեցին Հայոց Իմաստասեր Ոգու հարատևությունը նշանակում է ոչինչ չասել: Հարկավոր է մոռացումի ընդերքից վկայակոչել Հայոց միջնադարյան « խավարի» մեջ որպես պայծառ ջահեր վառվող բոլոր կրթական օջախների, ուսուցիչների անունները:

Կցանկանայի հոդվածի շրջանակներում շարունակել ուխտագնացությունը դեպի Սյունյաց դպրավանքեր, բայց անհնար է... Որովհետև դպրոցներն ամենուր էին և նրանց մասին մագաղաթյա մատյանների հիշատակարաններում ամփոփված տեղեկություններից կարելի է բազմածավալ գրքեր հավաքել, և դա չի լինի վերջնական, որովհետև հիշատակարանները չեն միայն, որ խոսում են դպրոցների մասին, այլ ողջ գանձեղեն այն կուտակումը, որ Հայոց Ոգեղենի առահավատչյան է առհասարակ: Համառոտ կերպով անդրադարձ կատարելով Սյունիքի կրթօջախների պատմությանը և ժամանակագրությանը՝ կարող ենք, անվարան, փաստել, որ սա մի ժամանակահատված է, երբ հայ դպրոց հասկացությունը գրեթե ամբողջությամբ համատեղվում է հայ եկեղեցի հասկացության հետ: Մի ժամանակահատված է, երբ աշխարհիկ իշխանների և հոգևորական բարձրաստիճան պաշտոնյաների սերտ համագործակցության արդյունքում հիմնվեցին բազմաթիվ կրթօջախներ, որոնց շրջանավարտները հոգևոր բարձր կոչումների արժանանալուց զատ թողեցին գիտական ուսումնասիրությունների ու մատյանների անգնահատելի նմուշներ:

Այսպիսով, սույն հոդվածը կոչված է էլ ավելի բարձրացնելու և ընդգծելու հայ եկեղեցու և հայ դպրոցի միասնականության, հայ ժողովրդի կյանքում նրանց ունեցած դերի բացառիկության գաղափարը: Հայ աշակերտին, ուսուցչին, զինվորին և ընդհանրապես հայ մարդուն ներշնչելու այն միտքը, որ նույնիսկ հայ ժողովրդի պատմության առավել դժվարին ժամանակահատվածներում հայ եկեղեցու և հայ դպրոցի միաձույլ գոյությունն է եղել մեր ժողովրդի հարատևման միակ իրական երաշխիքը:

Մինչ օրս Հայ Առաքելական եկեղեցին շարունակում է լուսավորչական իր գործունեությունը՝ հիմնելով նորաներ ճեմարաններ ու հոգևոր հաստատության ուսումնական կենտրոններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խաչերյան Լ.Գ., Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի մեջ (XIII-XIV դդ.), Երևան 1973 թ.

2. Արևշատյան Ս., Մաթևոսյան Ա., Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն, Երևան, 1984 թ.

3. Գ. Մ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրորք, Երևան., 1981թ.:

4. Ի. Ղարիբյան, Գլաձոր, Երևան, 1983թ.:

5. Ա. Ավետիսյան, Հայկական մանրանկաչության Գլաձորի դպրոցը, Երևան, 1971 թ.:

6. Գ. Հովսեփյանց, Գլաձորի բարձր դպրոցը կամ «համալսարան»ը, տե՛ս նրա Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մեջ, մասն 2:

7. Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, գլխ. Խմբ. Հովյ. Այվազյան, Հայկական հանրագիտարան, հրատ. Երևան, 2002:

8. Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երեւան, 1988:

9. Բարխուդարյան, Հերմոնի դպրոցի տեղադրությունն ու գործունեությունը, Բանբեր Մատենադարանի, 1960թ. N5:

10. Գ. Գրիգորյան, Սյունիքը Օբելյանների օրոք, Ե., 1981:

11. Ա. Գզոյան, Տաթևի համալսարանը, Եր., 2003,

Բոլոր ժամանակների Հայաստանը, Աննա Պետրոսյան, Հատոր Բ, Երևան 2009

Մատենադարանի ձեռագրեր N 1916/1849

https://vayotsdzoritem.com/2013/08/22

http://aregnapayl.am/hy/culture/edu_cult_centers/hermoni-vanakan-dprots.html

SYUNIK MEDIEVAL SCHOOLS UNDER THE PROTECTION OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH - GOHAR MIKAYELYAN - Syunik was the oldest and most important area of Armenian education, where at the beginning of the 5th century on the initiative of Mesrop Mashtots, the first Armenian schools were founded by local princes Vasak and Vagharshak.This article briefly describes the history of Syunik medieval schools, when the concept of Armenian school was almost entirely associated with the notion of the Armenian Church.Numerous schools were founded due to the close cooperation between secular leaders and clergymen. The graduates of these schools not only got spiritual high titles but also left invaluable examples of scientific studies and records.

Key words: Syunik medieval schools, Armenian Apostolic Church, education, science

СРЕДНИВЕКОВЫЕ СЮНИКСКИЕ ШКОЛЫ ПОД ПОКРОВИТЕЛЬСТВОМ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ - ГОАР МИКАЕЛЯН - Одним из важных и древних образовательных центров являлся Сюник, где еще в начале 5 века по Инициативе Месропа Маштоца и покровительством местных Князей Васака и Вагаршака были основаны первые школы.В данной статье вкратце представлена истортя средневековых Сюникских школ, период, когда понятие Армяская школа ассоциировалась с понятием Армянская Апостольская церковь, когда благодаря сотрудничесву армянских священнослужителей и армянских Князей было основано огромное количество школ, выпускники которых не только получали высокие звания, но оставляли бесценные научные исследования.

Ключевые слова: Среднивековые Сюникские школы, *Армянская Апостольская Церковь* , образование, наука